# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1142-Ա

## ԳՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/10 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԿԻՄԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ «Կիմա Խաչատրյան» Ա/Ձ-ն մասնակցել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի գյուղական բնակավայրերի մանկապարտեզների կարիքների համար անվտանգության տեսախցիկների ձեռքբերման նպատակով «ԳՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/10» ծածկագրով գնման ընթացակարգին, «Կիմա Խաչատրյան» Ա/Ձ-ն 2024 թվականի հուլիսի 3-ին ծանուցվել է eauction համակարգի միջոցով, սակայն օրենքով սահմանված կարգով 5 աշխատանքային օրում «Կիմա Խաչատրյան» Ա/Ձ-ն չի ստորագրել և eauction համակարգ չի բեռնել պայմանագրի նախագիծը, մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ***որոշում եմ.***

1. ԳՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/10 ծածկագրով գնման գործընթացի մասնակից «Կիմա Խաչատրյան» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «բ» ենթակետի:

Ստորև համապատասխան տեղեկատվությունը աղյուսակի տեսքով:

| Մասնակցի | | | | |
|---|---|---|---|---|
| Անվանում | ՀՎՀՀ | Գործունեության հասցե | Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու | Գնման ընթացակարգի ծածկագիրը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | իրավական հիմքերը | |
| «Կիմա Խաչատրյան» Ա/Ձ | 43255361 | ՀՀ Կոտայքի մարզ, Զովունի 38 փողոց, շենք 22/5 | <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 6-րդ մասի «Բ» ենթակետ<br>**Խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը** | ԳՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/10 |

2. Սույն որոշման մեկական օրինակն ուղարկել «Կիմա Խաչատրյան» Ա/Ձ- ին և ՀՀ Ֆինանսների նախարարություն:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Թաթուլ Դավթյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Վ. ԴԱՎԹՅԱՆ**

2024թ. հուլիսի 16
ք. Մարտունի